

352:34  
Հ - 14

ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ ՑԵՐԿՎԵՐԻ, ՄԻԱՅԵՒ

ՀՐԱՏԱՐՈՒԿՈՒԹՅՈՒՆ  
ՀԱԽՀ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԺՈՂ. ԿՈՄԻՍԱՐԻԱՆՏԻ

ԳԻՐՔ № 8

ԳՅՈՒՂԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ  
ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ԸՆԴԼԱՑՆԵԼՈՒ  
ՄԱՍԻՆ

(Որենիքի մասինի պարզաբնություն)

---

ՅԵՐԵՎԱՆ

1928.

19 MAR 2010

ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ ՅԵՐԿՐՆԵՐԻ, ՄԻԱՅԵ՞Ք

352:34 ԱՎ

2-11

ՀՐԱՑԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ  
ՀՍԽՀ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՃՈՂ. ԿՈՄԻՍԱՐԻԱՏԻ

ԳԻՐՔ № 8

ԳՅՈՒՂԻՄՈՐՅՈՒՐԴՆԵՐԻ  
ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ԸՆԴԱՅՆԵԼՈՒ  
ՄԱՍԻՆ

(Որենիք մասչելի պարզաբնություն)

ՅԵՐԵՎԱՆ



1928.

ՀՅԱՆԴԻՈՐՀՈՒԹՅՈՒՆԵՐԻ ԻՐԱՎՈՒԽՔՆԵՐՆ ԸՆԴ-  
ԼԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Ունեցի մասնիկ պարզաբանություն)

Հոկտեմբերյան հեղափոխությունն աշխատավորական լայն մասսաների առաջ զբետական խոշոր կարևորություն ունեցող հարց—կառուցել պրոլետարական պետություն, իրականացնել սոցիալիստական հասարակակարգը։ Այս կարևորագույն խնդրի տեսակետից առանձնապես լուրջ նշանակություն է ստանում գյուղխորհուրդների աշխատանքը, քանի վոր գյուղխորհուրդները հանդիսանում են խորհրդային իշխանության ստորին բջիջները տեղերում։ Նրանք միացնում, համախմբում են գյուղի աշխատավորներին Պրոլետարական Հեղափոխության նվաճումներն ամբացնելու դործում։

Գյուղխորհուրդների կանոնադրության (հաստատված 1925 թ. մարտի 16-ին ՀՍԽՀ Կենտգործկոմի կողմից) համաձայն, գյուղխորհուրդների գլխավոր անելիքներն են՝ բարձրացնել գյուղատնտեսությունը, պայքարել տղիտության ու գյուղական կյանքի այլ բացա-

ՏՊԱՐԱՆ ՀԵՐՄԵՍ  
 ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅԱՆ,  
 ՄԱՐՔՍԻ ՓՈՆ. № 29  
 ԳՐԱՌԵՄ. 540Բ  
 ՏԵՐԱԺ 1600.

սական յերեութների դեմ, պաշտպանել աշխատավոր բնակչության իրավունքները, հիմնվելով բանվորների և չքավոր ու միջակ գյուղացիների դաշնքի մրա, ճշտությամբ և անշեղորեն կիրարկել բանվորագյուղացիական կառավարության այն որենքները, վորոնց նպատակն ե բարելավել աշխատավորների կենցաղը՝ մեծ չափերով գյուղացիներին ու գեղջկուհիներին մասնակից դարձնել պետությունը կառավարելու և պետական ապարատը բարելավելու գործին։ Ուրիշ խոսքով՝ գյուղխորհուրդները տեղերում կազմակերպում են գյուղի աշխատավորներին պետական ու անտեսական շինարարության համար, պաշտպանում են աշխատավորներին և կիրարկում Խորհրդային իշխանության բոլոր ձեռնարկութները։

Հայաստանի խորհրդադնացման այս Շտարֆա ընթացքում կատարված աշխատանքն ակրնհայտնի կերպով ապացուցեց, վոր մեր գյուղխորհուրդները հեղինակություն են ձեռք բերել աշխատավորների աշքում, բավականաչափ քաղաքական փորձ ունեն և գյուղում կարեոր դեր են կատարում չքավորների ու միջակների դաշնքն իրականացնելու, ամրացնելու գործում։ Այս պայմաններում կոմունիստական կուսակցության ու բանվորագյուղացիական իշխանու-

թյան առաջ, բնականաբար, հարց ծագեց այն մասին, վոր ժամանակն ե ընդարձակելու գյուղխորհուրդների իրավունքները և մի շաբթ հարցերի լուծումը կենտրոնից գյուղ փոխադրելու, գյուղխորհուրդներին հանձննելու, վորպեսզի իշխանության ստորին ապարատն ել ավելի ձերկուն, աշխատունակ և մասսաների լայն խավերին մատչելի դառնա։ Այս ձեռք միաժամանակ ել ավելի կաշխուժանա գյուղխորհուրդների աշխատանքը։

Այս նպատակով ՀՍԽՀ Բանվորա-գյուղացիական Տեսչության Ժողկոմատը, նախապես հետազոտելով գյուղխորհուրդների ապարատն ու աշխատանքը, ստացված արդյունքների համեմատ մշակեց իշխանության տեղական մարմինների իրավունքներն ու պարտականություններն ընդարձակելու վերաբերյալ առաջարկները (1927թվի մայիսի 28.ին), վորոնք հաստատվեցին քարձրագույն իշխանության կողմից (ն. թ. հունիսի 28.ին) և այժմ կիրառվում են կյանքում։ Նկատի ունենալով այդ որենքի մեծ կարեւորությունը, կանգ առնենք նրա զվարակոր կետերի վրա։

Ամենից առաջ պետք ե նշել, վոր այդ ոքենքի հիմնական նպատակն ե ապակենտրոնացման յենթարկել տեղական կառավարչական ա-

պլարատը, վորպեսզի տեղական մարմիններում  
ավելի արագ կերպով լուծվեն հերթական տըն-  
տեսական, ֆինանսական, կուլտուրական ու  
վարչական հարցերը, այլև այդ ճանապարհով  
զարկ ստանա տեղական նախաձեռնությունը,  
այսինքն՝ տեղական մարմիններն իրենք լուծեն  
տեղական կյանքին վերաբերյալ մի շարք հար-  
ցեր:

Այս նպատակով ընդարձակվում են գյուղ-  
խորհուրդների իրավունքները վարչական աս-  
պարիզում, նրանց կից հիմնվում են դատական  
սեկցիաներ, փորոնք քննության են առնում և  
վճռում քրեական ու քաղաքացիական վորոշ  
կարգի գործեր, գավառային կենտրոն հանդի-  
սացող խոշոր գյուղերի և անտեսապես ուժեղ  
գյուղերի խորհուրդներին իրավոնք և տրվում  
ունենալու իրենց բյուջեն և այլն։ Վորովհետեւ  
այս հարցերը շատ եյական և կարեոր նշանա-  
կություն ունեն, ուստի մինք կանդ կառնենք  
նրանցից յուրաքանչյուրի վրա առանձին։

---

## I. ՎԱՐՉԱԿԱՆ ԱՍՊԱՐԻՁՈՒՄ

Ա. ԳՅՈՒՂԱԾՈՒՐՀԱՐԴՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ  
ՎԱՐՉԱԿԱՆ ՄԻԶԱՑՆԵՐ (ՊԱՏԻԺՆԵՐ)  
ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԳՈՐԾՈՒՄ

Գյուղություն ունեցող որենքի համաձայն վե-  
րադաս գործկոմիների պարտադիր գորոշումների  
ուժը տարածվում է նաև գյուղական վայրերի  
վրա։ Յեթե առաջ գյուղի քաղաքացիներից վոր-  
ուե մեկը խախտում եր այդ պարտադիր գորո-  
շումները, ապա գյուղխորհուրդներն իրավունք  
չունեյին իրենք անմիջական կերպով խախտո-  
դին վարչական պատժի յենթարկելու։ այդ մա-  
սին գյուղխորհուրդները միայն արձանագրու-  
թյուն եյին կազմում և ուղարկում վերադաս  
մարմին՝ հանցավորին վարչական պատժի յեն-  
թարկելու համար, և հարկե այդ կարգը չեր կա-  
րող նպատականարմար և ճիշտ համարվել, վո-  
րովհետեւ բացի արձանագրություն կազմելու հետ  
կապված դիվանական ծախքերից, գործը ձգձգ-  
վում, ուշանում եր, մինչև արձանագրությունը  
կազմվում և վերադաս մարմիններին եր ու-  
ղարկվում, անցնում եր բավական ժամանակ, և  
պատիժ սահմանելն այլև աննպատակ եր գառ-  
նում։ Նոր որենքը վերացնում է այդ թերու-  
թյունները. գյուղխորհուրդներն այժմ իրավունք

ունեն պարտադիր վորոշումները խախտողների վերաբերմամբ վարչական միջոցներ գործ դնելու այն դեպքերում, յերբ հենց նույն պարտադիր վորոշումների մեջ այդ իրավունքը տրվում է նրանց, գյուղխորհուրդները այդպիսի դեպքերում կարող են հանցավորներին յենթարկել մինչև 3 ռուբլի առևտնքի կամ հարկադիր աշխատանքների մինչև 5 որ ժամանակով, սակայն առանց կալանքի տակ պահելու:

Գյուղխորհուրդների վորոշումների դեմ պարտադիր վորոշումները խախտողները կարող են դանդատ տալ գավառակային գործկոմի նախագահությանը, վորի վորոշումներն արդեն վերջնական են:

Այդ գանգատները տրվում են գյուղխորհուրդների միջոցով մի շաբաթվա ընթացքում, հաշված այն որից, յերբ պատասխանատվության յենթարկվող անձին տեղեկություն ե տրվում գյուղխորհուրդի վորոշման մասին: Յերբ գյուղխորհուրդի վորոշման դեմ բողոք ե տրվում, այդ դեպքում հիշյալ վորոշումն այլևս ի կատար չի ածվում, մինչև համապատասխան գավառակային գործկոմը հաստատի կամ չհաստատի այդ վորոշումը:

Բ. ԳՅՈՒՂԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԸ, ՎՈՐՊԵՍ ՔԱՂԱՔԱՅԻԱԿԱՆ ԿԱՅՈՒԹՅԱՆ ԱԿՏԵՐԸ ՏՈՄԱՐԱԳՐՈՂ ՅԵՎ ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՈՒ ՀՈԴԱԲԱՐՁՈՒԹՅԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐ

Նոր որենքը գյուղխորհուրդի իրավունքներն ընդարձակել ենակ նրանով, վոր նրանց իրավունք ե տվել տոմարագրելու բացի ծննդից ու մահավանից նաև քաղաքացիական կացության մյուս ակտերը, այն ե՝ ամուսնությունը, ամուսնալուծությունը, (ապահարզան) և վորգեգրումը. այդ ակտերը իր ժամանակին տոմարագրելը մեծ նըշանակություն ունի, քանի վոր տոմարագրված բոպեյից տոմարագրվող քաղաքացիների համար ծագում են վորոշ իրավունքներ և պարտականություններ:

Գյուղխորհուրդների 1925 թ. կանոնադրությամբ նրանք իրավունք ունեյին տոմարագրելու միայն ծնունդն ու մահը, իսկ մնացած ակտերից՝ ամուսնությունը տոմարագրվում եր գավառակային գործկոմում, իսկ ամուսնալուծությունը՝ գավառային գործկոմում: Տոմարագրության այս կարգը, ի հարկե, մեծ անհարմարություն եր ստեղծում գյուղացիների համար, վորովհետեւ ամեն անգամ գյուղացին իր ամուսնությունը կամ պահարզանը տոմարագրելու

համար ստիպված եր թողնել իր բան ու գործը  
տնային ու դաշտային աշխատանքները և զնակ  
գավառակային կամ գավառական գործկոմ, նա  
ի հարկե, բացի ժամանակ կորցնելուց, ստիպ-  
ված եր լինում նաև վորոշ ծախս անելու:

Նոր որենքը վերջ ե տալիս այդ կարգին, և  
այժմ քաղաքացիական կացության ակտերի տո-  
մարադրությունը գյուղերում կատարելու յեն  
գյուղագործները, իսկ քաղաքներում—քաղ-  
աքարհուրդները. այս նոր կարգը միանգամայն  
նպատակահարմար ե և համապատասխանում ե  
աշխատավորության լայն մասսաների շահերին: Մը  
Արանից հետո գյուղացիները քաղաքացիական  
կացության ակտերը տոմարագրելու համար ան-  
միջապես դիմելու յեն գյուղագործին: Տոմա-  
րագրությունը կատարվում ե ձրիաբար: Ինչ վոր  
տոմարագրվում ե, կարգացվում ե դիմում տը-  
գող անձերի առաջ, վորոնք ստորագրում են  
մտայանում, յեթե գրագետ են, իսկ յեթե ան-  
գրագետ են, նրանց փոխարեն ստորագրում են  
յերկու գրագետ վկաներ և այն պաշտօնյան,  
վորը կատարել ե տոմարագրությունը:

Ամեն մի քաղաքացի, վորը գտնում ե, վոր  
տոմարագրության ժամանակ վորեն բան սխալ  
և գրված, որինակ՝ ամուսնացողների ազգանու-

նը ճիշտ չեն գրել և այն, կարող ե դիմել ժող-  
ուատարան ուղղել տալու կատարված սխալը:

Կանգ առնենք մանրամասն այն բանի վրա,  
թե ինչպես ե կատարվում ծննդյան, մահվան,  
ամուսնության և ապահարզանի արձանագրու-  
թյունը, և ինչպես են գյուղխորհուրդները այդ  
ակտերը մուծում առանձին մատյանների մեջ,  
այսինքն՝ տոմարագրում:

## 1. ԾՆՆԴՅԱՆ ԴԵՊՔԵՐԻ ՏՈՄԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Յերեխա ծնվելու մասին . գյուղխորհողին-  
պետք ե հայտնի ծնողներից մեկը յերկու շա-  
բաթվա ընթացքում. այդ մասին հայտնվում է  
գրավոր կամ բերանացի: Յեթե ծնողները հի-  
վանդացել կամ մեռել են կամ վորեւ այլ պատ-  
ճառով հնարագորություն չունեն գյուղխորհոր-  
դին հայտնելու յերեխա ծնվելու մասին, այդ  
գեպքերում պարտավոր են հայտնելու ազգական-  
ները կամ մոտիկ հարեւանները կամ այն ծննդա-  
բերական ապաստարանի վարչությունը, վորտեղ  
գանվել ե մայրը յերեխան ծնելիու:

Դիմումի մեջ պետք ե ցույց արվի յերե-  
խայի ծնվելու տեղը, ժամանակը, յերեխայի սե-  
նը, նրան տրվող անունն ու ազգանունը, ծնող-  
ների տարիքը և դիմում ավողի անունը, հայրա-  
նունը և ազգանունը: Որենքի համաձայն հիշյալ

անձինք պարտավոր են գյուղխորհրդին տեղեւկություն տալ նաև այն գեղքերում, յերբ մեռած յերեխա յե ծնվում, վորպեսզի այդ մասին տոմարագրություն կատարվի մատյանի մեջ։ Հաճախ պատահում ե, վոր մայրերը իրենց յերեխային ծածուկ գցում են փողոցները, պատերի տակ, այս վամ այն անկյունը (ընկեցիկություն), չքափորության պատճառով հնարավորություն չունենալով նրանց խնամելու և դաստիարակելու։ Այսպիսի գեղքերում միլիցիան պարտավոր է արձանագրություն կազմել՝ թե վորտեղ, յերբ, և ինչ յերեխա յե գտնված, և այդ մասին հայտնել տոմարագրության մարմին—գյուղխուրհուդներին, ներկայացնելով նաև արձանագրությունը։

## 2. ՄԱՀՎԱՆ ԴԵՊՔԵՐԻ ՏՈՄԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Մահվան մասին պետք է հայտնել դեպքից հետո 3 որվա ընթացքում, իսկ բոլի մահվան կամ դիտել գանելու գեղքում—վոչ ուշ քան հաջորդ որվա ընթացքում։ Մահվան մասին իր ժամանակին հայտնելը շատ կարևոր է. մի կողմից այդ անհրաժեշտ է նրա համար, վորպեսզի վարակիչ հիվանդությունների գեմ միջոցներ ձեռք առնվեն այն գեղքերում, յերբ հիվանդը մեռել

ե վարակիչ հիվանդությունից. յերկրորդ՝ շուահայտնելը կարևոր է նաև սպանության կամ այլ նման գեղքերում, վորպեսզի կարելի լինի իսկույն հանցագործությունը յերեան հանել և վոճագործներին ձերբակալել։ Մահվան մասին գրավոր կամ բանավոր հայտնում են մեռածի հետ ապրողները, հարեանները կամ հիմնարկության (հիվանդանոց, ուղղիչ տուն և այլն) վարչությունը վորտեղ մահը տեղի յե ունեցել, կամ միլիցիան, յերբ դիտել է գանում. այս վերջին գեղքում ներկայացվում է նաև միլիցիայի կազմած արձանագրությունը։ Մահվան մասին հայտարարողը, պետք է հայտնի այն ամենը, ինչ վոր ինքը դիտել մեռածի մասին, այսինքն՝ նրա անունը, հայրանունը, ազգանունը, ընտանեկան գրությունը, մահվան տարին, ամիսը, որը և պատճառը։ Վորպես ընդհանուր կանոն՝ մահվան փաստը պետք է վավերացված լինի բժշկի կողմից. այս հանգամանքը կարևոր է նրա համար, վորպեսզի պարզ լինի, թե իրոք տվյալ անձը բնական մահով է մեռել, թե ուրիշի ձեռքով սպանված է, կամ ինքնասպանություն է զործել։ Այն վայրերում, վորտեղ բժիշկ չկա, մահվան փաստը հաստատում են յերկու վկա։

Կարող են լինել նաև այնպիսի գեղքեր, յերբ այս կամ այն անձը մեռած է ձանաչվում

դատարանի վճռով. այդպիսի գեղքերում մահը տոմարագրվում է այնտեղ, վորտեղ վերջին անդամ ապրելիս ե յեղել տվյալ անձը. մատյանի մեջ հիշատակվում է նաև դատարանի անունը և նրա վորոշման թվականը:

### 3. ԱՄՈՒՍՆՈՒԹՅԱՆ ՑԵՎ ԱՄՈՒՍՆԱԼՈՒԾՈՒԹՅԱՆ ՏՈՄԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Որենքի մեջ ասված ե, վոր ամուսնության տոմարագրությունը կատարվում է ամուսինների և զավակների անձնական ու գույքային իրավունքներն ավելի հեշտությամբ պաշտպանելու նպատակով: Բացի տոմարագրված ամուսնություններից կան և չտոմարագրված ամուսնություններ. այսինքն՝ մարդ և կին կենակցում են առանց Զագուում տոմարագրվելու: Ի՞նչ նըսպատակ ունի այս գեղքում տոմարագրությունը: Հայտնի յե, վոր ամուսնանալով կինն ու մարդն իրենց վրա վորոշ պարտականություններ են վերցնում զավակներին դաստիարակելու, միմյանց ոգնելու համար և այլն:

Ցենթադրենք, վոր տոմարագրված ամուսնությունից յերեխա յե ծնվել. մի քանի ժամանակից հետո հայրը թողնում, հեռանու ե իր ընտանիքից և նույնիսկ հրաժարվում ե, վոր ինքն ե յերեխայի հայրը. վորովհետեւ ամուս-

նությունը տոմարագրված ե, ուստի այս գեղքում յերեխայի մայրն ստիպված չե ապացուցելու, թե ով ե յերեխայի հայրը. այդ փաստն արդեն ապացուցված ե համարվում հենց տոմարագրությամբ, սակայն յերբ ամուսնությունը տոմարագրված չե և ամուսինը ժխտում ե, վոր ինքն ե յերեխայի հայրը, այդ գեղքում գծվարանում ե յերեխայի մոր գործը, վորովհետեւ նա ստիպված պետք ե լինի դատարանի միջոցով ապացուցելու, թե ով ե յերեխայի հայրը և նրան կատարել տալ իր ծնողական պարտականությունները: Այս գեղքում դատարանն ե լուծում ծագած վեճը:

Այսպիսով ամուսնության տոմարագրությունն ամուսնության անվիճելի ապացույց ե համարվում: Ի հարկե, ամուսնության տոմարագրությունը ժամանակավոր յերեռոյթ ե, քանի դեռ յերեխայի պահպանությունն ու դաստիարակության գործը դրված ե ընդհանրապես ծնողների վրա. սակայն, յերբ ապագայում յերեխաների պահպանության ու դաստիարակության ամբողջ հոգան իր վրա կվերցնի պետությունը, այն ժամանակ ամուսնության տոմարագրությունն այլևս կարեոր և անհրաժեշտ չի լինի: Ներկայումս, սակայն, ամուսնության տոմարագրությունն անպայման հեշտացնում ե

զավակների ու մոր շահերի պաշտպանությունը՝  
Ամուսնությունը տոմարագրել ցանկացող-  
ներն այդ մասին հայտարարություն են տալիք  
գյուղական վայրերում—գյուղխորհուրդներին,  
իսկ քաղաքային վայրերում—քաղխորհուրդներին։ Հայտարարության հետ պետք է անպայ-  
ման ներկայացնել ամուսնացողների անձնափո-  
րությունը և տարիքը հաստատող փաստաթրդ-  
թեր, ինչպես նաև վկայական այն մասին, վոր-  
նանք փոխադաբար գիտեն, թե նրանցից  
յուրաքանչյուրն առողջ և թե հիվանդ և ինչ  
հիվանդություն ունի։ Միաժամանակ ամուսնու-  
թյունը տոմարագրող պաշտոնյան պետք և ա-  
մուսնացներին ծանօթացնի ամուսնությունը  
տոմարագրելու պայմաններին և նրանց նախա-  
զգուշացնի, վոր սուտ տեղեկություններ տալու  
համար նրանք քրեյական պատասխանատվու-  
թյան կենթարկվեն ժողովրդական դատարանի  
առաջ։ Դրանից հետո մատյանում կատարված  
արձանագրությունը կարգացվում և ամուսնա-  
ցողներին, վորոնք ստորագրում են մատյանում  
արձանագրության տակ և ապա տոմարագրող  
պաշտոնյան իր ստորագրությամբ վավերացնում  
և արձանագրությունը։

Գյուղխորհուրդներն ամուսնությունը լու-  
ծում են թե յերկու ամուսնու համաձայնու-

թյամբ և թե այն գեղքում։ յերբ այդ մասին  
դիմում և տալիք միայն ամուսիններից մեկը։

Ամուսնությունը լուծելու մասին հայտա-  
րարությունը տրվում է գրավոր կամ բերանա-  
ցի. ամուսինները կամ նրանցից մեկը պետք է  
ներկայացնի նրանց անձնագրությունը հաստա-  
տող փաստաթուղթ (ամուսնության վկայական,  
գյուղխորհուրդի կամ միլիցիայի տված տեղեկան-  
քը, արհմիության գրքույկը և այլն)։

Ամուսնությունը հաստատող վկայական չը  
լինելու գեղքում դիմում տվողը պետք է տե-  
ղեկություն տա, թե յերբ և վօրտեղ և կատար-  
վել ամուսնությունը, այս դեպքում նա պա-  
տասխանատու յե իր տված տեղեկությունները  
ճիշտ լինելու համար։

Ամուսնությունը փոխադաբ համաձայնու-  
թյամբ լուծվելու գեղքում գյուղխորհուրդները  
պարտավոր են պարզել թե ամուսնությունը  
լուծվելուց հետո ամուսիններից յուրաքանչյուրն  
ինչ ազգանուն և ուզում կրել. այս գեղքում  
բաժանվողները իրավունք ունեն կրելու կամ  
իրենց ամուսնական ընդհանուր ազգանունը կամ  
իրենց մինչամուսնական ազգանունը. ամուսին-  
ների միջև փոխադաբ համաձայնություն չինե-  
լու գեղքում նրանցից յուրաքանչյուրին տրվում  
և նրա մինչամուսնական ազգանունը։ Յերբ ա-



մուսնությունը լուծվում է ամուսիններից մեկի զիմումի հետևանքով և տեղեկություն չկա, թե ամուսինների միջև ազգանվան մասին համաձայնություն ե կայացել, մյուս բացակայող ամուսնուն տրվում ե նրա մինչամուսնական ազգանունը:

Ամուսնությունը ամուսիններից մեկի դիմումի համաձայն լուծվելու դեպքում գյուղխորհուրդը զիմում տվողից տեղեկություն ե սահնում մյուս ամուսնու բնակավայրի մասին և յերեք որվա ընթացքում նրան ծանուցում ե ուղարկում այն մասին, վոր ամուսնությունը լուծված է. յեթե բացակա ամուսնու բնակավայրը բոլորովին հայտնի չե, գյուղխորհուրդը, մինույն ե, տոմարագրում ե ամուսնալուծությունը և դիմողի հաշվով այդ մասին հայտարարում ե թերթում: Ամուսնալուծությունը տոմարագրելիս գյուղխորհուրդները, պարտավոր են հարց տալ բաժանվող ամուսիններին, թե զավակներից վորը և նրանցից վորի մոտ պետք ե մնա ու դաստիարակվի, և նրանցից յուրաքանչյուրը ինչ չափով պետք ե մասնակցի զավակների ապրուստի ու դաստիարակության ծախսերին և ինչքան միջոց պետք ե հատկացնի մյուս անաշխատունակ ամուսնուն: Յեթե այս բոլոր հարցերի մասին ամուսինների միջև համաձայնություն կա-

յանա, ապա այդ բոլորի մասին՝ պետք ե հիշատակել ամուսնալուծության տոմարագրության մեջ: Իսկ յեթե այդ մասին ամուսինները համաձայնության չեն դալիս, ապա վիճելի հարցերը վարոշվում են ժողովատարանի միջոցով, յերբ կողմերից մեկը դատարան է դիմում: Ամուսիններից ամեն մեկը իրավունք ունի ամուսնալուծության տոմարագրությունից քաղվածք առանալու:

Ահա սրանք են քաղաքացիական կացության ակտերի տոմարագրության գործում գյուղխորհուրդների վրա գրված նոր պարտականությունները:

#### 4. ՎՈՐԴԵԳՐՈՒՄ

Վորդեգրումը ևս տոմարագրում են գյուղխորհուրդները. որենքը թույլ ե տալիս վորդեգրել միայն յերեխաններին ու անչափահասներին, նկատի ունենալով բացառապես նրանց շահերը: Վորդեգրել կարող են բոլոր անձինք, վորոնք խնամակալ նշանակվելու իրավունք են վայելում:

Վորդեգրելու ժամանակ վորդեգրվողին կարելի յե տալ վորդեգրողի ազգանունը, իսկ յեթե վորդեգրվողը համաձայն ե, նրան կարելի յե տալ նաև վորդեգրողի հայրանունը: Տասը տարեկան

դարձած յերեխաներին կարելի յէ վորդեզը ել  
միայն այս ժամանակ, յերբ նրանք համա-  
ձայն են վորդեզը վելուն: Յեթե վորդեզը վորդեզը  
ծնողներ ունի կամ գանվում և խնամակալու-  
թյան տակ, ապա նրան վորդեզը վորդեզը  
պետք ե ստանալ ծնողների կամ խնամակալնե-  
րի ու հոգաբարձուների համաձայնությունը՝  
Ամեն մարդ կամ ամեն մի հիմնարկություն կա-  
րող ե դատարանի (ժողգատարան) միջոցով վե-  
րացնել վորդեզը ումը, յեթե յերեխայի շահերը  
այդ են պահանջում:

Դատարանը վորդեզը ումը բեկանելու դեսլ-  
քում վորոշում ե կայացնում յերեխային վոր-  
դեզը վերցնելու և խնամակալության ու  
հոգաբարձության մարմիններին հանձնելու մա-  
սին. միաժամանակ դատարանը կարող ե վորդե-  
զը պարտավորեցնել հոգալու յերեխայի ալ-  
բուստը:

Որենքը կարուկ կերպով վորոշում ե, վոր-  
դեզը վորդեզը ու նրա սերունդը վորդեզը հետ-  
և վորդեզը վորդեզը վորդեզը ու նրա սերնդի հետ-  
գույքային և անձնական հարցերում նույն հա-  
րաբերության մեջ են գանվում, ինչպես միե-  
նույն ծագում ունեցող ազգականները. որինակ՝  
վորդեզը իրավունք ունի վորդեզը մահ-  
վանից հետո ժառանգելու նրա անձնական կամ

հայրական գույքը. միաժամանակ վորդեզը վորդեզը  
շափահաս և աշխատունակ դառնալուց հետո  
պարտավոր ե հոգալու իրեն վորդեզը կամ  
նրա ծնողների ապրուստը, յեթե նրանք ոգնու-  
թյան կարիք ունեն և անաշխատունակ են կամ  
յեթե վորդեզը ունի ուրիշ զավակներ, ապա  
վերջինները իրավունք ունեն վորդեզը վածից,  
վորպես իրենց յեղարից՝ ապրուստի միջոց պա-  
հանջելու, յեթե իրենց հայրը միջոցներից զուրկ  
և ճանաչված կամ մեռել ե, իսկ իրենք անչա-  
փահաս են և ոգնության կարուտ:

Վորդեզը մեծ նշանակություն ունի,  
վորովինետև այդ ձեռվ կարելի յէ մասամբ թե-  
թեացնել անապաստան վորքերի վիճակը: Ան-  
հրաժեշտ ե միայն, վորպեսզի գյուղաբորհուրդ-  
ները մեծ ուշադրությամբ վերաբերվեն վորդե-  
զը ման գործերին և թույլ չտան, վորպեսզի  
յերեխաներին վորդեզը անվասանելի մարդիկ,  
վորոնք կարող են նրանց շահագործել իրենց  
անձնական շահերի համար. որինակ՝ կարող են  
ինել այնպիսի դեպքեր, յերբ այս կամ այն  
ունեողը մի վորդի վորդեզը և հետո նրան ան-  
խնա կերպով աշխատեցնի իր այգում կամ ար-  
տում, կամ իր վոչխարները հանձնի նրան ա-  
րածացնելու և այդպիսով վոչ թե վորքի վիճա-  
կը թեթևացնի, այլ իր անտեսական աշխա-

տանքները նրա ոգնությամբ կատարի և նրան մշակ կամ հովիվ դարձնի: Պարզ է, վոր գյուղ-խորհուրդները պետք ե բոլոր միջոցներով պայ-քարեն այդպիսի վորդեղբողների գեմ և թույլ չտան, վոր այդ անձնավորությունները յերեխաւ վորդեղբեն. իսկ յեթե վորդեղբումն արդեն տե-ղի իւ ունեցել, ապա գյուղվորհուրդները պետք ե դատարանի միջոցով վերացնել տան այդ վորդեղբումը:

### 5. ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ ՅԵՎ ՀՐԴԱԲԱՐՁՈՒ- ԹՅՈՒՆ

Նոր որենքը կանոնավորում ե նաև խնա-  
մակալության ու հոգաբարձության գործերը և  
սահմանում ե մի ընդհանուր կարգ: Գյուղական  
վայրերում այդ գործերը վարում են գյուղխոր-  
հուրդները, իսկ քաղաքներում—քաղիսորհուրդ-  
ները:

Խնամակալությունն ու հոգաբարձությունը  
կարգվում ե այն անձանց շահերը պաշտպանե-  
լու համար, վորոնք անզործունակ են համար-  
վում, այսինքն՝ չեն կարող ճիշտ և վորոշ կեր-  
պով իրենց կամքը, իրենց ցանկությունը հայտ-  
նել, չեն կարող իրենց գույքը տնօրինել, որի-  
նակ՝ ծախել, գրավ դնել, վարձով տալ և այն-  
այդ անձինք նախ անչափահաներն են, վորոնք

կեռ 18 տարեկան չեն դարձել, ապա ֆիզիքա-  
կան վորեկ արատ ունեն (հոգեպես հիվանդ են,  
տկարամիտ են) և այդ պատճառով չեն կարող  
խելացի և զիտակցական կերպով իրենց գործերն  
ու անտեսությունը կառավարել:

Խնամակալությունը նշանակվում է նաև  
գյույքը պահպանելու համար այն գեղքերում,  
վորոնք ցույց են տրվում որենքով. այդ գեղքե-  
րի մասին կը խոսենք ցածում:

Որենքի համաձայն խնամակալությունը  
կարգվում է մինչև 14 տարեկան անշափահան-  
ների վրա կամ այն անձանց վրա, վորոնք իշ-  
խանության համապատասխան մարմինների կող-  
մից համարվում են տկարամիտ կամ հոգեկան  
հիվանդ կամ շռայլող, փշացնող:

Շռայլող անձանց վրա խնամակալությունը  
կարգվում է նրա համար, վոպեսզի նրանք ի-  
րենց գույքը չվատնեն, չփշացնեն, վորովհետե-  
իրենց ունեցած չունեցածը վատնելուց, շռայ-  
լուց հետո նրանք և նրանց ընտանիքը կնկնեն  
նյութական ծանր գրության մեջ, և կը տուժեն  
նրա զավակներն ու կինը: Ահա յերեխաների և  
կնոջ շահերը պաշտպանելու համար ել որենքը  
այդպիսի անձանց վրա խնամակալություն և  
կարգվում:

Բացի դրանից խնամակալություն և կարգ-

վում նաև այն անձանց վրա, վորոնք ժողովատարանի կողմից համարված են անհայտ բացակայող կամ մեռած։ Այս գեղքերում խնամակալությունը նշանակվում է նրա համար, վորպեսզի անհայտ բացակայողի գույքը չհափշատի են։ Անհայտ բացակայող կամ մեռած են հայտարարվում հետեւյալ գեղքերում։ յեթե քաղաքացիներից վորեն մեկը անհայտ բացակա յե, և հիմք կա յենթադրելու, վոր նա կամ մեռել ե կամ նրան վորեն գժբախտություն ե պատահել, ապա նրա հարազատները կամ ազգականները և կամ նրանք, վորոնք նրա գույքով շահագրգոված են, կարող են դիմել ժողովատարանին վորպեսզի այդ անձը անհայտ բացակայող ճանաչվի։ Դատարանը ստուգում է այդ հանգամանքը, հայտարարություն ե տպել տալիս, վորով անհայտության մեջ գտնվող անձին առաջարկում ե ներկայանալ իր բնակավայրը և յեթե հայտարարությունը լույս տեսնելուց հետո մի ամսվա ընթացքում ճիշտ տեղեկություն չստացվի այն մասին, վոր հիշյալ անձը այսինչ տեղումն ե գտնվում, կամ մեռած ե, ապա ժողովատարանը դատական նիստ ե նշանակում, հրավիրում ե դիմում ավողին ու վկաններին և վորոշում ե կայացնում այդ անձին սնհայտ բացակայող ճանաչելու մասին։ Իր վորոշման մասին ժողովա-

տարանն անմիջապես հայտնում է համապատասխան գյուղխորհրդին կամ քաղխորհրդին, այս մասին մատյանին մեջ գրելու համար։ Դյուղխորհուրդներն ել իրենց հերթին (նաև քաղխորհուրդները) միջոցներ են ձեռք առնում անհայտ բացակա ճանաչված անձի գույքը պաշտպանելու համար և խնամակալություն են նշանակում նրա ունեցածի վրա։

Անհայտ բացակայող անձը կարող է դատարանի կողմից համարվել մեռած, յեթե նրան անհայտ ճանաչելու որից 5 տարի յե անցել այդպիսի անձին մեռած համարելու և քաղաքացիական կացության ակտերի մատյանում տոմարագրելու համար գյուղխորհուրդը պետք ե անպայման ձեռքի տակ ունենա ժողովատարանի այդ մասին կայացրած վորոշման պատճենը։ Այս գեղքում մեռած ճանաչվածի գույքի վրա խնամակալություն ե նշանակվում։

Դյուղխորհուրդը խնամակալ է նշանակում այնպիսի անձանց, վորոնք ընդունակ են այդ պարտականությունը կատարելու խնամակալները գործում են այն անձի անունից և նրա շահերի համաձայն, վորի գույքի վրա խնամակալ են նշանակված կատարում են նրանց պարտականությունները և պաշտպանում նրանց իրավունքները։ Յեթե խնամակալները, ինչպես

հարկն ե, չեն կատարում իրենց պարտականությունները, ապա գլուղխորհուրդները կարող են նրանց հեռացնել: Գավառակային գործկոմները չեն խառնվում զյուղխորհուրդների գործերին խնամակալ նշանակելու կամ արձակելու դեպքերում. նրանք միայն ընդհանուր հսկողություն ունեն և հետևում են, վորպեսզի զյուղխորհուրդները խնամակալության գործերը ճիշտ և որենքի համաձայն կատարեն: Խնամակալության գործերում զյուղխորհուրդների անելիքն այն է, վոր նրանք անհրաժեշտության դեպքերում թույլ են տալիս խնամակալներին, նրանց խնամքին հանձնված գույքը դրավ դնել, ժամանակ առ ժամանակ ստուգում են այդ գույքը, քննում են խնամակալների հաշվաները և նրանց դեմ տրվող գանգատները:

Անշափահասների վրա կարգված խնամակալները պարտափոր են հոգ տանել, վորպեսզի նրանց խնամքի տակ դտնվող յերեխանները դաստիարակվեն, ուսում ստանան և պատրաստվեն հասարակական ողտակար աշխատանքների համար:

Հոգեկան հիվանդների և տկարամիանների խնամակալները պարտափոր են բոլոր միջնորդները ձեռք առնել նրանց բժշկել տալու համար:

Խնամակալներն իրենց խնամքի տակ դըտ-

նվող անձանց իրավունքներն ու շահերը պաշտպանելու համար պարտափոր են նրանց կողմից դուրս գալ դատարանում և ուրիշ հիմնարկություններում, նաև նրանց կողմից մասնակցել այս կամ այն պայմանագիրը կնքելիս, վորը շոշափում է խնամարկյալների շահերը:

Հոգաբարձությունը նշանակվում է 14-ից մինչև 18 տարեկան անշափահասների, ինչպես նաև այն չափահասների վրա, յեթե նրանք ֆիզիկական վորեն պակասություն պատճառով (կույր, խուլ, համր և այլն) չեն կարող ինքնուրույն կերպով պաշտպանել իրենց շահերն ու իրավունքները. այդպիսի դեպքերում հոգաբարձուներն ոգնում, աջակցում են նրանց իրենց իրավունքներից ոգավելու կամ իրենց պարտականությունները կատարելու ժամանակ: Հոգաբարձուները պաշտպանում են վերոհիշյալ անձանց ուրիշների վասահար արարքներից. որինակ՝ խուլ ու համր անձի վրա կարգված հոգաբարձուն ամեն գեպքում ոգնում է նրան, հետեւում է նրա կատարած գործողություններին, և առհասարակ հսկում է, վորպեսզի ուրիշները նրա խուլ ու համր մինելու հանգամանքից չոգաբքն և այլն:

Գյուղխորհուրդները հոգաբարձուների վրա ևս այնպիսի հսկողություն ունին, ինչպես ինա-

մակալների վրա. յեթե հոգաբարձուներն իրենց պարտականություններն ինչպես պետք են չեն կատարում, դյուղխորհուրդները կարող են նըշքանց հեռացնել և նոր անձանց նշանակել նրանց փոխարեն:

Հոգաբարձուների պարտականությունները նույն են, ինչ վոր ինամակալներինը. ուստի այդ մասին մենք յերկար չենք խոսի: Թե քաղաքացիական կացության ակտերի առմարտքության կարգը և թե ինամակալների ու հոգաբարձուների իրավունքներն ու պարտականությունները մանրամասն բերված են «Ամուսնության, ընտանիքի և ինամակալության Ուրենագրքի» մեջ, վորը հաստատված ե ՀՍԽՀ Կենտգործկոմի 2-րդ նստաշրջանի կողմից 1927 թվի սեպտեմբերի 18-ին (Որ. և կարգ. Փող. 1927 թ. № 9):

#### Գ. ԳՅՈՒՂԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ՆՈՏԱՐԱԿԱՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Դեռ Կենտգործկոմի և Փողկոմիսարնի կողմից 1926 թ. հոկտեմբերի 13-ին հրատարակված ուղենքով դյուղխորհուրդների վրա մի շաբք պարտականություններ են դրվում, այսպես՝ նրանք կարող են վավերացնել փոխանորդագրեր (դավերեննոստ), ստորագրություններ, փաստաթըզ-

թերի պատճեններ, ինչպես նաև քաղաքացիների ինքնությունը, յերբ նրանք վորոշ գործություններ են կատարում:

Որինակ, յերբ գյուղացին պետք ե փուտից փող կամ ծանրոց (պարլկա) ստանա, ապա նա կարող ե մի ուրիշին հանձնարարել իր փոխարեն ստանալ փողը կամ ծանրոցը այդ գեպքում նա այդ անձին տալիս ե իր ստորագրությամբ փոխանորդագրիլ վորը հաստատում, վավերացնում ե գյուղխորհուրդը:

Մի ուրիշ որինակ՝ վորեե աշխատավոր հոգագործ դատարանում կամ հողային հանձնաժողովում կամ պետական մի այլ հիմնարկության մեջ գործ ունի, սակայն ինքը զբաղված ե կամ վորեե պատճառով չի կարող ներկա լինել. ահա նա այս գեպքում կարող ե մի ուրիշի նանձնարարել իր փոխարեն դատարան կամ հիմնարկություն ներկայանալ. այս նպատակով նա հիշյալ անձին տալիս ե փոխանորդագրիր, վորը դարձյալ պետք ե վավերացնի դյուղխորհուրդը: Գյուղխորհորդի կողից վավերացված փոխանորդագրիրը նույն ուժը ունի, ինչպես և նոտարի վավերացրածը:

Գյուղխորհուրդները վավերացնում են նաև այն փոխանորդագրերը, վոր զանազան կոոպերատիվ (արտադրական, սպառողական, վարկային

և այլն) կազմակերպություններ կամ փոխադարձ ոգնության գյուղացիական ընկերությունները տալիս են այս կամ այն անձին նրանց փոխարքեն դատարանում կամ այլ պետական հիմնարկություններում վորոշ գործեր վարելու համար:

Գյուղխորհուրդները վավերացնում են նաև այն փոխանորդագրերը, վոր աշխատավոր հողոգտագործողները կամ նրանց միությունները տալիս են այս կամ այն անձին՝ աշխատավորական հիմունքներով հողեր և պետական հողային գույքեր վարձով վերցնելու դեպքում նրանց փոխարքեն պայմանագրերը կնքելու համար կամ գյուղատնտեսական մեքենաներ ու գործիքներ հատով և արժեքը մաս-մաս վճարելու պայմանով գնելու դեպքում նրանց կողմից պարտավորագրեր ստորագրելու համար:

Բացի դրանից գյուղխորհուրդները վավերացնում են անզրագետ գյուղացիների կողմից կատարված ստորագրություններն այն դեպքերում, յերբ նրանք մաս-մաս վճարելու պայմանով գյուղատնտեսական մեքենաներ ու գործիքներ են գնում և նրանց փոխարեն նրանց խնդիրքով պարտավորագրի տակ ստորագրում են ուրիշ գրագետ անձինք: Գյուղխորհուրդները վավերացնում են նաև գյուղացիների ինքնությունը այն դեպքերում, յերբ նրանք փոստից վորեւեքան են

առանում, նրանց ստորագրությունները դիմումների և զանազան այլ փաստաթղթերի վրա, ինչպես նաև վավերացնում են ամեն տեսակ թղթերի պատճենները: 1927 թ. հուլիսի 29-ին որենքն ել ավելի յե ընթարձակում գյուղխորհուրդների պարտականությունները նոտարական գործողություններ կատարելու ասպարիգում: այսպես՝ գյուղխորհուրդներն այժմ նոր որենքի համաձայն կարող են վավերացնել առ ու ծախսի, փոխանակության, նվիրման, գույք վարձով տալու, գյուղատնտեսական մթերքներ մատակարարելու վերաբերյալ պայմանագրեր, յեթե այդ պայմանագրերը կնքում են առանձին քաղաքացիներն իրար հետ, կամ կոռպերատիվների, հողային հասարակությունների, փոխադարձ ոգնության գյուղացիական ընկերությունների և պետական ձեռնարկությունների հետ, յեթե այդ գործարքների գումարը, այսինքն՝ վաճառվող գույքի գումարը, մատակարարվելիք մթերքի արժեքը, վարձով տրվող գույքի համար ըստացվելիք ամբողջ գումարը և այն 300 ռուբլուց ավելի չե, իսկ վարձակալության դեպքերում՝ յեթե պայմանը մի տարօւց ավելի ժամանակով չի կնքվում: Որինակ՝ յերկու աշխատավոր հողագործներ, վորոնք միջին տնտեսություն ունեն, գյուղում գտնվող սպառողական

կոռալերատիվի հետ պայմանագիր են կնքում  
այն մասին, վոր պարտավորվում են 6 ամսվա  
ընթացքում 300 ոռոբլու մթերք մատակարարել  
իրենց տնտեսությունից, իսկ կոռալերատիվը իր  
կողմից պարտավորվում է ամեն անգամ վորոշ  
քանակությամբ մթերք ստանալիս վճարել 25 ռ.  
բայց վոչ ավելի քան լնդամենը 300 ոռոբլի:

Այդպիսի պայմանագրերը վավերացվում են  
գյուղապետությունների կողմից և նոտարական գոր-  
ծարքի ուժ ունեն:

Նույն ձևով վավերացվում են նաև փոխա-  
նակության պայմանագիրը, յերբ յերկու անձ  
իրենց ունեցածները փոխում են իրար հետ.  
Նույն կարգով վավերացվում են նաև նվիրման  
պայմանագիրը, վորով մեկը իր գույքը նվիրում,  
այսինքն՝ իր հոժար կամքով ձրիալես տալիս ե  
մի ուրիշն: Այս բոլոր դեպքերում պայմանա-  
գրի մեջ հիշված գումարը պետք է 300 ոռոբ-  
լուց ավելի չլինի:

Մի տարուց վոչ ավելի ժամանակով վար-  
ձատրության պայմանագիր կնքելու դեպում,  
այսինքն՝ յերբ մի կողմը մյուսին (վարձակա-  
լին) վորոշ վարձատրությամբ գույքը և տրամա-  
դրում ժամանակավորապես ոգտվելու համար,  
պայմանագրի համաձայն կատարվող վճարումնե-  
րի ամբողջ գումարը 300 ոռոբլուց ավելի չը-  
պետք է լինի:

Վորագես ընդհանուր կանոն, գյուղապետությ-  
ուները չեն վավերացնում շենքերի վերաբերյալ  
գործարքները: Որենքը թույլ է տալիս գյուղ-  
խորհուրդներին վավերացնել շենքերի վերա-  
բերյալ գործարքները մինչև 600 ոռոբլու  
սահմաններում միայն այն դեպքերում, յերբ  
գյուղացին տեղափոխվում է մի ուրիշ վայր և  
իր ունեցած տունը վորոշ վարձատրությամբ  
զիջում է այն հողոգաւագործողին, վորը հողմար-  
մինների թույլատվությամբ տեղափոխվում է  
նույն գյուղը:

Այժմ տեսնենք, թե վերոհիշյալ պայմանա-  
գրերը, փոխանորդագրերը և առհասարակ այս  
կամ այն փաստաթուղթը վավերացնելիս ինչոք  
պետք է զեկավարվեն գյուղինորհուրդները, այ-  
սինքն՝ ինչի վրա պետք է դարձնեն իրենց ու-  
շագրությունը:

Պայմանագիր ու փոխանորդագրեր վավերա-  
ցնելիս գյուղինորհուրդները պետք է ստուգեն  
կողմերի, այն ե՛ պայմանագիրը կնքող անձանց  
կամ փոխանորդագիր ավողների և ստացողների  
ինքնությունը, այսինքն՝ իրենք համոզվեն, վոր  
իրենց ներկայացած անձինք իսկապես այն ան-  
ձինք են, վորոնք հիշված են պայմանագրի կամ

փոխանորդագրի մեջ. բացի դրանից, պետք ե  
համոդվեն, զոր այդ անձինք ըմբռնում էն ի-  
քենց կատարած գործարքի իմաստը և նշանա-  
կությունը:

Այն դեպքերում, յերբ գործարքները կըն-  
քում և փոխանորդագիրը տալիս են, այսպես  
կոչված, իրավական անձինք, այսինքն՝ կոռպերա-  
տիվները, փոխադարձ սպնություն գյուղացիա-  
կան ընկերությունները (ՓՈԳ) և այլ կազմա-  
կերպություններ, գյուղխորհուրդները պետք ե  
պարզեն հետեւյալ հանդամանքները:

1. Կոռպերատիվը, Փոխոգկոմը կամ պայմա-  
նագիր կնքող վորհե այլ կազմակերպություն  
արդյոք ունի սահմանված կարգով հաստատված  
կանոնադրություն թե վոչ:

2. Պայմանագիր կնքող կամ փոխանորդա-  
գիր տվաղ կազմակերպությունը իր կանոնագր-  
ության համաձայն իրավունք ունի արդյոք  
այդ գործարքը կատարելու:

3. Այդ կազմակերպության անունից պայ-  
մանագիր կնքող կամ փոխանորդագիր տվաղ  
անձինք այդպիսի իրավունք ստացել են արդյոք  
կազմակերպության կամ ձեռնարկության վար-  
չությունից, կամ կանոնադրության համաձայն  
այդպիսի իրավունք ունին, թե վոչ:

Ան այս հարցերը պետք ե գյուղ-

խորհուրդները նախ պարզեն, ստուգեն, ճնշո-  
միայն վավերացնեն այս կամ այն գործարքը:

Յեթե պայմանագիր կնքողը անձամբ հայտ-  
նի յե գյուղխորհոգին, ապա պայմանագիրը վա-  
վերացնելիս նրա վրա կատարվող մակագրու-  
թյան մեջ հիշվում ե, վեր տվյալ անձը հայտնի  
յե գյուղխորհոգին, իսկ յեթե գործարքին մաս-  
նակցող անձինք գյուղխորհուրդներին անձամբ  
հայտնի, ծանօթ չեն, ապա Նրանց ինքնությու-  
նը, նրանց ով լինելը պարզվում և հաստատվում  
ե այս կամ այն փաստ սթղթի հիման վրա, որի-  
նակ՝ հաշվեգրքույնի, արհմիության անդամա-  
ռումսի, ծննդյան արձանագրության քաղկածքի  
վրա և այլն:

Պայմանագրերի վավերացումը կատարվում ե  
պայմանագրի վրա համապատասխան մակագրու-  
թյուն անելով, իսկ վորհե փաստաթղթի պատ-  
ճենը վավերացնելիս նախ՝ գյուղխորհուրդը այդ  
պատճենը բառ առ բառ համեմատում ե իսկա-  
կանի հետ և հետո պատճենի վրա մակագրում  
«այս պատճենը իսկականին համեմատ ե»:

Այս նոտարական գործողությունները գյուղ-  
խորհուրդները կատարում են միայն այն դեպ-  
քերում, յերբ նրանց գտնված վայրում նոտա-  
րական զրասենյակներ չկան:

Թե գյուղխորհուրդներն ինչպես պետք ե

Քերոչիշյալ բոլոր գործարքները կատարեն, այդ  
մասին մանրամասն հրահանգ և ցուցմունքներ  
ե տալիս ՀՍԽՀ Գերագույն Դատարանը:

Ե. ԳՅՈՒՂԻՈՐՀՅՈՒՐԻՆԵՐԻ ԻՐԱՎՈՒԵՔՆԵՐԸ  
ՀԱՇԽԱՌՈՒԱԿԱՆ ԳՐՐԾԵՐԲՆԵՐԻ ԴԵՄ ԿՐՎԵ-  
ԼՈՒ ԱՍՊԱՐԻՉՅՈՒՄ

Գյուղխորհուրդների կարեոր անելիքներից  
մեկն ել այն ե, վոր պաշտպանեն զյուղական  
չքափորներին կուլակների ամեն տեսակ վոտըն-  
ձգություններից:

Համկոմկուսի կենտկոմի և կենտրոնական  
վերահսկիչ Հանձնաժողովի վերջին միացյալ  
նիստն ի միջի այլոց նաև այն ցուցմունքը ար-  
գեց, վոր «զյուղացիության մեծամասնության  
անտեսական դրությունը լավանալու պատճառով  
աճում և նաև կուլակների թիվը, ուստի կու-  
ռակցական ու խորհրդային բոլոր մարմինները  
պետք ե մեծ ուշադրություն դարձնեն, վոր-  
պեսզի կուսակցության ցուցմունքի համաձայն  
ամեն կերպ ողնեն, աջակցեն զյուղի չքափոր-  
ու միջակ տարրերին բարձրացնելու իրենց արն-  
տեսությունը, և թույլ չտան, վորպեսզի ունե-  
վորները շահագործեն, ճնշեն նրանց»:

Այս ցուցմունքն իրագործելու պարտակա-  
նությունը մեծ չափով ընկնում ե գյուղխոր-

հուրդների վրա, վորոնք ոլեաք ե բաց անեն,  
մերկացնեն կուլակների արարքները, յերբ նրանք  
զանազան ձևերով ուղղում են շահագործել չքա-  
փորներին. Առաջ, յերբ գյուղխորհուրդները նը-  
կատում եյին, վոր վորեւ կուլակ այս կամ այն  
ձևով շահագործում ե չքափորին ու բարբակին,  
նրանց հետ վաշխառուական պայմանագիր ե  
կնքում և այլն, այդ մասին հայտնում եյին հա-  
մապատասխան մարմինն, վորպեսզի նա անվա-  
յեր համարեք, քանդեք կապած պայմանը կամ  
կատարած գործարքը. իսկ այժմ, նոր որենքի  
համաձայն, այդպիսի գեղքերում գյուղխոր-  
հուրդներն իրենք անմիջապես զիմում են ժող-  
գատարան՝ այդ պայմաններն ու գործարքներն  
անվավեր համարելու, քանդելու համար և միա-  
ժամանակ հայտնում են համապատասխան մար-  
միններին (գատախազ, քննիչ և այլն), վորպես-  
զի վաշխառուական պայման կապող, գյուղա-  
ցուն այս կամ այն գործարքի միջոցով շահա-  
գործող անձանց քրեական պատասխանատվու-  
թյան յենթարկեն:

Այս մասին տրվող գանգատներն ու հայ-  
ցերն ազատ են գատական տուրքերից:

Այսպիսով նոր որենքն իրավունք ե տալիս  
գյուղխորհուրդներին ինքնուրույն կերպով հրա-  
պարակ գալ և գատարանի միջոցով քանդել

վաշխառուական պայմանագրերը, գործարքները՝ Այդ անելով՝ զյուղիսորհուրդներն իսկապես պաշտպանած կլինեն զյուղի չքավորների, բառքակների շահերը:

Այս ուրենքը կարևոր է նաև այն տեսակետից, վոր հեղափոխական որինականությունը տեղերում ամրացնելու գործում զյուղիսորհուրդներին նոր իրավունքներ են տրվում:

## II. ԳՅՈՒՂՆՈՐԴՈՒԹՅՈՒՆԵՐԻ ԲՅՈՒՋԵԻ ԻՐԱՎՈՒՄԸ

Գյուղիսուբյուների բյուջեյի հարցը կապված է նրանց ֆինանսական-տնտեսական գործունեության հետ. իսկ այդ գործունեության ծավալումն իր հերթին կախված է յերկրի արտադրողական ուժերի զարգացումից (զյուղատնտեսություն, արդյունաբերություն և այլն) և Խորհրդային իշխանության բոլոր ձեռնարկած միջոցների նպատակն է բարձրացնել զյուղի տնտեսական բարեկեցությունը:

Գյուղիսորհուրդների 1925 թ. կանոնագրության համաձայն, նրանց տնտեսական գործունեության հիմնական ճյուղը՝ արհեստանոցներ, դիմունքեր, գարբնացանքներ, զուգավորման կայաններ, վարձակայաններ և այլ ձեռնարկություններ կազմակերպելն է (հոդ. 8 «Պ» և «Լ» կետեր):

Սրա հետ միաժամանակ կարևոր նշանակություն ունի նաև զյուղիսորհուրդների գործունեության ֆինանսական կողմը:

Գյուղիսորհուրդները, վորպես ընդհանուր կանոն, չունեն իրենց բյուջեն. նրանք ունեն միայն յելքի ու մուտքի նախահաշիվ, վորը մտնում է գավառակային գործկոմի բյուջեյի մեջ:

Սակայն գավառային գործկոմների առաջարկությամբ կենտղործկոմը կարող է խոչընդունակ դյուղերի դյուղիսորհուրդներին բյուջեյի իրավում առաջ հանդիպ առաջ (հոդ. 9 «Լ» կետի ծանոթություն):

Գյուղիսորհուրդները կատարում են միշտ հասարակական ծախսեր, ինչպես՝ գիշերաշպանների, զյուղական հովիվների, խրճիթ-լնթերցարանների պահպանություն և այլն. այս հնաման ծախսերի համար անհրաժեշտ գումարները գյուղիսորհուրդներն ընդհանրապես վերցնում են քաղաքացիներից ինքնահարկման կարգով. այդ ինքնահարկումը կատարվում է որենքով սահմանված կարգով, զյուղի քաղաքացիների ընդհանուր ժողովի վորոշումներով, վորսնք հաստատվում են. գավառակային գործկոմի կողմից:

Սրանով ընդհանուր առմամբ սպառվում է գյուղիսորհուրդների ֆինանսական տնտեսական ամբողջ գործունեությունը:

Սակայն այդ գործունեությունը ծավալելու,

Քնչպես նաև գյուղխորհուրդների աշխատանքն ամբացնելու և աշխուժացնելու համար անհրաժեշտ ե նյութական աղբյուրներ ստեղծել: Յեվ իրոք այն ինդիքները և իրավունքները, վորոնք այժմ նոր որենքի համաձայն տրվում են գյուղխորհուրդների վարչական, տնտեսական, կուտարական և բժշկական ասպարեզներում, կարող են իրագործվել միայն կայուն բյուջե ունենալու գեպքում:

Գյուղխորհուրդները չեն կարող լայն կերպով ժավալել իրենց գործունեությանը և կիրառել այս կամ այն ձեռնարկումը, յեթե նրանք իրենց անհրաժեշտ միջոցներն ստանում են գավառակային գործկոմիերից կամ գանձում են գյուղի քաղաքացիներից ինքնահարկման կարգով:

Յեվ անա նոր որենքը գյուղխորհուրդների իրավունքները ընդարձակելու նպատակով գավառակային կենտրոնների, ինչպես նաև խոշոր գյուղերի գյուղխորհուրդներին, վորոնք ունեն յեկամտի ազբյուրներ (այդիներ, սպանդանոցներ, բազարներ և այլն), իրավունք և տալիս ունենալու իրենց բյուջեն: Այդ աղբյուրները հնարավորություն կատար գյուղխորհուրդներին ծածկելու իրենց ծախսերի մի զգալի մասը:

Այս նոր որենքի կիրառմամբ գյուղխոր-

հուրդները կը կարողանան ել ավելի ակտիվություն ու ինքնուրույնություն հանդես բերել իրենց անտեսական ու կուլտուր-կրթական գործունեյության վերաբերյալ զանազան հարցերը լուծելու ասպարիզում:

Այս որենքը ել ավելի մեծ նշանակություն ունի նրանով, վոր առաջին անգամ ստորին խորհրդային ապարատի համար նյութական հիմք և ստեղծում:

### III. ԳՅՈՒՂԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ԴԱՏԱԿԱՆ ՍԵԿՑԻԱՆԵՐԸ

Գյուղխորհուրդների իրավունքների ընդլայնման մասին խոսելիս անհրաժեշտ ե նուև հիշատակել, զոր ՀՍԽՀ ենտղաբեկոմի 2-րդ նստաշրջանի 1927 թ. սեպտեմբերի 18-ի վորոշման համաձայն գյուղխորհուրդներին կից հիմնվում են գավառական սեկցիաներ: Այս սեկցիաներն առաջին անգամ են հիմնվում և քննելու յեն այն քաղաքացիական գործերը, վորոնց պահանջի գինը 15 սուրլուց ավելի չե և այն քրեական գործերը, վորոնք վերաբերում են ծեծին (Քր. Որ. 172 հոդ. 1 մաս) և խոսքով, գրավոր կամ գործողաթյամբ վերադարձնեացնելուն (Քր. Որ. 185 հոդ.):

Այս որենքը նպատակ ունի արագացնելու գյուղական վայրերում ծափող քաղաքացիական և քրեական գործերը և գրանով վորոշ չափով թեթևացնել ժողովրդական դատարանները մանք, վոչ այնքան կարե-

վոր գործերից: Պետք և առել, վոր գյուղխորհուրդների գտատական սեկցիաները չեն քննում այն քաղաքացիական գործերը, վորոնք ծագում են բատրակների և նրանց վարձող գյուղացիների միջև այն դեպքերում, յերբ բատրակը զյուղացու անտեսության մեջ աշխատել և և վեճը առաջ և յեկիլ նրան հասանելիք վարձի շուրջը, այդ գործերը քննում են գյուղխորհուրդներին կից հաշտարար հանձնաժողովները կամ ժողովրդական գտատանները: Բացի գրանից զատական սեկցիաները չեն քննում նաև աշխատավարձի, ամսւանուն ու զավակներին ապրուսափ միջոցներ (ալիմենտ) տալու վերաբերյալ գործերը, ինչպես նաև այն գործերը, վորոնք հարուցվում են պետական հիմնարկությունների կամ ձեռնարկությունների կողմից կամ նրանց զեմ:

Դատական սեկցիաների գլխավոր նշանակությունն այն և, վոր նրանք, վորպես գյուղացիության լոյն մասսաների մեջ գործող և նրանց հետ անմիջապես շփող մարմիններ, կարողանան զատական ուղղիչ միջոցներով ազդել այդ մասսաների վրա, նվազեցնել գյուղում տեղի ունեցող բացասական յերեսություններ:

Դատական սեկցիաները, խոսքով, գրավոր (նամակով) կամ գործողությամբ վերագորանք հասցնելու դեպքում հանցավորներին զատապարտում են հարկադիր աշխատանքների մինչև մի շաբաթ ժամանակով կամ՝ տուղանքի մինչև 5 ուրեմի, իսկ ծեծելու զեպքում՝ հարկադիր աշխատանքների մինչև յերկու շաբաթ ժամանակով կամ՝ տուղանքի մինչև 25 ուրեմի:

Դատական սեկցիաների գործունեությունը կարդագործում է ՀՍԽՀ Արդժողկոմատի կողմից նրանց գործակալված առանձին հրահանգով. բացի գրանից նրատա-


բակված և բալոր գյուղխորհուրդներին և ուղարկված նաև մի առանձին մատչելի գրքույկի, վորի մեջ մահրամասնորին բացատրված են գտատական սեկցիաների կազմը, իրավունքները, պարտականությունները, գործերը քննելու կարգը և մեացած ըոլոր հարցերը:


Այսպիսով այս գրքույկի մեջ մենք բացատրեցինք, թե նոր որենքով գյուղխորհուրդներին ինչ իրավունքներ են արքած վարչական, բյուջեային և զատական գործեր ըննելու ասպարիզում:

Այդ նոր իրավունքներն ստանալով և գործադրելով, գյուղխորհուրդները կը զառնան խորհրդային իշխանության ել ավելի ճկուն, ել ավելի աշխատունակ և լայն մասսաներին մատչելի ապարատը տեղերթում:

X  
Նորմական  
Հայոց







ՀՀ Ազգային գրադարան



NL0213448

39 788